

րում: Սակայն ստացուած արդիւնքները դեռեւս գոհացուցիչ չեն:

Գալուստ Տէր-Մկրտչեանը, իր «Պետրոս Սիւնեաց եպիսկոպոս», աշխատութեան մէջ (Վաղարշապատ 1902) մատնացոյց էր արել, որ «Հարցմունք յաղագս մարմնաւորութեան Տեառն զանազանք՝ Վաչագանի Աղուանից իշխանի ըստ Պետրոսի Սիւնեաց եպիսկոպոսի եւ իմաստասիրի» գրուածքը ծայրէ ծայր ներշնչուած է Արիստոտելեան փիլիսոփայութեամբ: Բաղդատութիւններից պարզ երեւում է, որ այս գրուածքի հեղինակին ծանօթ են եղել յատկապէս Գաւթի Սահմանաց գիրքը եւ Պորփիրիի Վերլուծութիւնը: Սակայն Վաչագանի Հարցումները, ինչպէս երեւում է Գալուստ Տէր-Մկրտչեանի ուսումնասիրութիւնից ոչ մի դէպքում չեն կարող վերագրուել Պետրոս Սիւնեաց եպիսկոպոսին, այլ, հաւանաբար, ծագած պիտի լինեն հայ եւ աղուան կրօնական վէճերի ժամանակ 8—10րդ դարում: Սահմանաց եւ Պորփիրիի Վերլուծութեան ակնբերեւ հետքերը Հարցումներում՝ նրանց թարգմանման ժամանակաշրջանի վերաբերմամբ՝ շատ քիչ բան են աւելացնում մեր գիտցածին: Արդէն իսկ յայտնի էր, որ Գրիգոր Մագիստրոսի «առ վարդապետն Սարգիս», գրուած թղթում յիշուած կան եւ Գաւթի փիլիսոփան եւ Ոլիմպիոդորոսի գրուածքը, որի թարգմանութիւնը նա վերագրել է «թարգմանչացն»¹:

Իջմիածնայ մատենադարանի թ. 596 ձեռագրում (= Մայր Յուլիանի թ. 582) Անանիա Շիրակացու «Յաղագս հարցման եւ լուծման» գրուածքը, ինչպէս նկատել է դարձեալ Գալուստ Տէր-Մկրտչեանը², ունի հետեւեալ յառաջաբանը, որ գրեթէ բառացի քաղուած է Պորփիրիի Ներածութեան բնագրից.

Ներած. Պորփ., 227, 2նո. թ. 596, էջ 185a.

«Զամենայն[ն] ասաց ի մաստուն[ն], թէ պէտեւ տալաւ ի բազմաց, եթէ զինչ ընդունելութիւնն, զինչ բազմապատիկ եւ բոլորովին յաղագս բաժանմանց եւ ապացուցից՝ պիտանացու եւ լոյր սոցայցն տեսութեանց: Համառաւտ քեզ ընծեռութիւն առնելով՝ փորձեցայց ի ձեռն սակաւուց իբր ներածութեան յեղա-

«Եւլոյ հարկաւորի, Բրիտաւորիէ, եւ յ'առ'ս Արիստոտելի ստորագրութեանցն վարդապետութիւն, գիտել զինչ սեռ եւ զինչ տարբերութիւն եւ զինչ տեսակ, զինչ յատուկ եւ զինչ պատահումն ի սահմանացն բացատրութիւն, եւ բոլորովին յաղագս բաժանման եւ ապացուցի պիտանացուի եւլոյ սոցայցն տեսութիւն, հա-

նակի՝ զառ ծերունեացն անցանելով բանիւ, ի խորագոնիցն ի բաց կալ ի խնդրոց եւ պարզագունիցն չափաւորապէս հանդիպելով: Արդ աստէն իսկ վաղ վաղակի յաղագս հարցման եւ թ ծման ...»

մառօտ քեզ ընծեռութիւն առնելով՝ փորձեցայց ի ձեռն սակաւուց իբր ներածութեան յեղանակի զառ ծերունեացն անցանել բանիւ, ի խորագոնիցն ի բաց կալ ի խնդրոց՝ եւ պարզագունիցն չափաւորապէս հանդիպելով: Արդ աստէն իսկ վաղ վաղակի յաղագս սեռի եւ տեսակի ...»

Այս ամբողջ հատուածը չունի սակայն Իջմիածնայ մատենադարանի Գեորգեան ցուցակի թ. 267 ձեռագիրը, որը սկսւում է ուղղակի հարցումներից: Գալուստ Տէր-Մկրտչեանը վաւերական է համարում այս վերջին ձեռագրի սկզբնաւորութիւնը եւ ենթադրում, որ ոչ ինքը Անանիա Շիրակացին, այլ մի ուրիշը՝ Պորփիրիի Ներածութեան վերոյիշեալ հատուածը կամեցել է յարմարացնել հարցումներին, իբրեւ յառաջաբան: Լինելով յետագայ ժամանակների յաւելուած, այս քաղուածքը չի կարող, ուրեմն, Ներածութեան թարգմանման ժամանակի համար ունենալ որեւէ նշանակութիւն:

Պորփիրիի Ներածութեան նոյն հատուածից, թւում է ինձ, որ օգտուած պիտի լինի Գաւթի Հարքացին դաւանաբանական փոքրիկ իր գրութիւններից մէկում, որը հրատարակել էր «Արարատ» ամսագրում Գարեգին վրդ. Յովսէփեանը (1906, մարտ, էջ 261—272):

Այս գրութիւնը, ինչպէս երեւում է նրա վերնագրից, գրուած է Անաստաս Կաթողիկոսի (661—666 թ.) հրամանով եւ ունի սկզբում հետեւեալ հատուածը՝ «Բայց նախ արդէն իսկ համարուող ընծեռութիւն առնելով, զեռչինչ իմ նախ քան զմիշտ էական իմացեալ» եւն (էջ 269): Ներածական բնորոշ այս դարձուածքը յիշեցնում է Պորփիրիի Ներածութեան յատուկ յառաջաբանը եւ կարծում եմ, որ նմանութիւնը կարող է պատահական չլինել, այլ վերագրուելու է Ներածութեան բնագրի ազդեցութեանը: Եթէ այս ենթադրութիւնն ընդունելի համարուի, այդ դէպքում՝ Պորփիրիի Ներածութեան բնագրի ծագման ամենավերջին սահմանը դրուելու է եթերորդ դարի վախճանական թուականներին:

Երևան:

ՊՐՈՓ. Յ. ՄԱՆԱՆԴԻԱՆ

(Շարտումակերի:)

¹ Տե՛ս Կ. Կոստանեանց, Գրիգոր Մագիստրոսի թղթերը, Աղեքսանդրապոլ 1910, էջ 66:

² Անանիա Շիրակացի, Վաղարշապատ 1896, էջ 11—12: